

ՅՐԱՆՍԵՐՆԵՒՅ ՊԱՏՃԵՆՎԱՍԾ ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(բստ Հյուգոյի «Թշվառների» առևտաճայ բարգամության)

Ա. Կ. ԲԱՐԵՋԻՉՅԱՆ

Թարգմանական գրականության ավանդույթներն իրենց որոշակի տեղն ունեն մեր ժողովրդի մշակույթի պատմության մեջ: Այս տեսակետից առանձնակի ուշադրության է արժանի արևմտահայ գրականության կապը Ֆրանսիականի հետ:

Անցյալ դարի Ֆրանսիական գրականությունը տվեց դասական հեղինակների մի ամբողջ համաստեղություն, որի մեջ իր ուրույն տեղն ունի Վ. Հյուգոն: Մեծ գրողի առաջավոր գաղափարներն ու լավատեսությունը, նրա հարուստ, պատկերավոր լեզուն ու ինքնատիպ ոճը համընդհանուր հետաքրքրություն և հիացմունք շարժեցին: Դրանից զերծ չմնացին նաև հայերը: Մի առանձին ջերմությամբ ու ոգևորությամբ էին ծանոթանում Հյուգոյի երկերին մեր ժողովրդի արևմտյան հատվածի ներկայացուցիչները, որոնք ոչ միայն կարդում, այլև թարգմանում էին դրանք: Անցյալ դարի 60—80-ական թվականներին միայն Հյուգոյի ծավալուն երկերից կատարված հայերեն թարգմանությունները հասնում են 220 տպագրական մամուլի, չհաշված բանաստեղծությունների, պատմելիքների, հոգևածների և ճառերի թարգմանությունները¹: Հատկանշական է, որ «Թշվառների» պես մեծածավալ երկի հայերեն թարգմանությունն սկսվում է այն ժամանակ, երբ Ֆրանսիայում դեռ նոր էր լույս տեսել բնագիրը: 1862 թ. հունիսի 1-ից արևմտահայ գրականության ու հրապարակախոսության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Գրիգոր Զիլինկիրյանը, ձեռնարկում է «Թշվառների» հայերեն թարգմանությանը և պարբերաբար տպագրում իր իսկ խմբագրած «Ծաղիկ» տասնօրյա հանդեսի էջերում: «Ծաղիկում» վեպի թարգմանությունն անավարտ է մնում: Շուտով, սակայն, Գր. Զիլինկիրյանն սկսում է վեպի լրիվ թարգմանության դժվարին ու շնորհակալ գործը, որն ավարտում է հաջողությամբ և 1868—1870 թթ. տաս հատորով ու արժեքավոր առաջաբանով լույս ընծայում Զմյուռնիայում: Հետագայում այն վերահրատարակվում է վեց անգամ՝ որպես ապացույց Ա. Չոպանյանի արտահայտած այն մտքի, թե Հյուգոյի վեպը հայ մարդու համար մի երկրորդ ավետարան էր դարձել: Այսօր օրինական հպարտությամբ կարող ենք նշել, որ Գր. Զիլինկիրյանի անձնվեր աշխատանքի շնորհիվ հայ ընթերցողն այս հմուտ ու ճաշակով կատարված թարգմանության միջոցով կարողացել է առաջինների թվում ծանոթանալ Հյուգոյի նշանավոր ստեղծագործությանը²:

¹ Տե՛ս Հայկ Գասպարյան, Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ, Երևան, 1963, էջ 209,

² Հայ գրականության ու հասարակական մաքի զարգացման, հայ թարգմանական գրականության պատմության, ինչպես նաև արևմտահայ գրական լեզուն ինքնուրույն ու թարգմանական գործերի մեջ մշակելու բնագավառներում Գր. Զիլինկիրյանի ունեցած դերի և «Թշվառ-

Վ. Հյուգոյի երկերն ու նրանց թարգմանությունները հավասարապես իրենց ազդեցությունն ունեցան լիռապես հայ գրականության, այնպես էլ հայոց լեզվի վրա: Խոսելով XIX դ. և մանավանդ նրա երկրորդ կեսում եվրոպական հեղինակների վեպերի հայերեն թարգմանվելու մասին, Հ. Աճառյանը գրում է. «Մի ամբողջ գրականություն հայերենի վերածվեց: Ժողովուրդը կարդաց, լսեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ, ընթերցանությունը պահանջ դարձավ և այդ ընթերցասիրության արդյունքն եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը: Առանձին ուսումնասիրության նյութ է կազմում այս կարգի վեպերի թարգմանության և թարգմանիչների պատմությունը»³:

Այսպիսով, XIX դ. կեսերից, երբ գրական աշխարհաբար անմախքան լայնացնում էր գործածության իր շրջանակները, միօրինականում և դրվում մշակման որոշակի հունի մեջ, երբ մեծանում էր գրական լեզվի խոսակցական բազան⁴, թարգմանական գրականությունն իր որոշակի դերը կատարեց գրական արևմտահայերենի որակական լիակատար ձևավորման գործում: Ֆրանսիական գրականության ամենատարբեր նմուշների և մասնավորապես Հյուգոյի երկերի թարգմանությունների ընթացքում կատարված բառափոխառությունները և հատկապես նորաստեղծ բառերը հարստացրին հայոց լեզվի բառապաշարը: Բնականաբար դրանց որոշ մասը մնաց թարգմանության շրջանակներում միայն: Սակայն բազմաթիվ են այն բառերը, որոնք մուտք գործեցին հայոց բառապաշարի գանձարանը և ամրացան այնտեղ:

«Լուրջ բառարանագետի պարտականությունն է,— գրում է Հ. Աճառյանը,— հավաքել այս բոլոր տեսակի նորակերտ բառերը, հիշել նրանց հեղինակը, գործածված տեղն ու ժամանակը, մի խոսքով՝ կազմել հայոց նորակերտ բառերի պատմությունը: Մեր գրողները բազմաթիվ ընտիր բառեր կազմեցին գիտությանց բոլոր ճյուղերի համար, ճիշտ ու ճիշտ թարգմանելով եվրոպական բառերը»⁵:

Սակայն մինչև պատճենումների դասակարգմանն ու քննությանն անցնելը, ճշտենք, թե ի՞նչ պետք է հասկանալ «պատճենում» ասելով, և որոնք են պատճենումը բնորոշող լատինիզմները, քանի որ փերջիններս միասնական չեն լեզվաբանական գրականության մեջ: Տվյալ դեպքում առաջնահերթ նշանակություն են ստանում հայ լեզվաբանների կարծիքները:

Սկզբից եեթ նշենք, որ հայ լեզվաբանության մեջ պատճենման երևույթը առանձին տեսումնասիրության նյութ չի դարձել, որի պատճառով էլ չի ենթարկվել բազմակողմանի վերլուծության, հակառակ պատճենման այն հարուստ ավանդույթներին, որ ունեցել է և ունի հայ գրական լեզուն նորակազմ բառերի ստեղծման գործում: Նպատակ չունենալով խորամուխ լինել երևույթի քննության մեջ, հայ լեզվաբաններն այն ներկայացրել են ընդհանուր դրժեքով միայն, հաճախ առանց պարզորոշ կերպով սահմանազատելու այլ երևույթներից:

ների՝ նրա թարգմանությանը նորայր Բյուզանդացու տված բարձր գնահատականի մասին տես Հ. Ղազարյան, Գրիգոր Զիլինկիրյան, Հայպետհրատ, Երևան, 1959:

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 496:

⁴ Տես Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը (Համառոտ ուղղագիր), Երևան, 1969, էջ 64:

⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 485:

Այսպես, պատճենումը՝ մոտեցվում, իսկ երբեմն էլ գրեթե նույնացվում է օտար բառերի թարգմանության հետ: 2. Աճառյանը գրում է. «Բառերի փոխառության մի ավելի հասարակ ձևն է թարգմանությունը՝ օտար լեզվից մայրենի լեզվին», որից հետո բերում է պատճենման օրինակներ և դրանով իսկ փաստորեն պատճենումը նույնացնում թարգմանության հետ⁶:

Գրեթե նույն ձևով է վարվում նաև Գր. Ղափանցյանը: «Բառափոխառությունը կարող է լինել նաև տառացի թարգմանության միջոցով..., նոր կամ հին հասկացության տառացի թարգմանությամբ, այսպես կոչված, կալվայի ձևով» — գրում է նա⁸:

Պատճենումը թարգմանության հետ առնչելու այս միտումը արտահայտություն է գտել նաև էդ. Ադայանի և Ա. Մուրվալյանի աշխատություններում:

էդ. Ադայանը գրում է. «Հաճախ փոխառվում է ոչ թե բառը, այլ նրա հասկացությունը, այսինքն՝ օտար լեզվի բառը ուղղապես թարգմանվում է: Այս երևույթը կոչվում է բառապատճենում (калька)»⁹:

Ա. Մուրվալյանը խոսելով հայերենի բառապաշարի համալրման ուղիների մասին, նշում է նաև «բառաթարգմանությունները կամ բառապատճենումները»¹⁰: Նման անորոշ ձևակերպումը, ինչպես նաև բերված օրինակների խալտաբեկությունը հիմք են տալիս ենթադրելու, որ կամ հեղինակը հավասարությունն նշան է դնում «բառապատճենում» և «բառաթարգմանություն» հասկացությունների միջև, կամ՝ առկա է թողնում պատճենման երևույթի բացատրությունը:

Այլ լեզվաբաններ (Ս. Ղազարյան, Գ. Սևակ) բառապաշարի հարստացման գործում պատճենումների դերը նշելով հանդերձ, չեն անդրադառնում երևույթի բացատրությանը:

Նման ձևակերպումները («թարգմանություն», «տառացի թարգմանություն», «ուղղակի թարգմանություն» և այլն), ինչ խոսք, չեն կարող հստակ պատկերացում տալ պատճենման մասին: Նախ և առաջ էական նշանակություն է ստանում այն, թե ինչ տարբերություն կա օտար բառերի ու բառակապակցությունների զանազան տեսակի «թարգմանությունների» միջև: Այսպիսի հարցադրման դեպքում իսկույն կես պարզ է դառնում, որ պատճենումը մասնակիորեն է համընկնում «թարգմանության» հետ: Որևէ օտար բառ կամ բառակապակցություն կարող է թարգմանվել, բայց բոլորովին էլ պատճենում չհամարվել և պարզապես հանդես գալ տվյալ լեզվի միջոցներով ստեղծված նորակազմություն: Այսպես, «Թշվառների» արևմտահայերեն թարգմանության մեջ հանդիպում ենք՝ ազատակամ (d'scrétionnaire), շնորշ (niche), ռնգախոռակ (nasiller), կամապահ (gabier), դրամատոմս (billet de banque), աւանաբնակ (faubourien), վիրակիր (balafre), նորաբույժ (convalescent)

⁶ «Պատճենում» (ֆրանս. calque) բառը որպես լեզվաբանական տերմին առաջին անգամ գործածել է Շ. Բալլին ֆրանսերենի ոճաբանությանը նվիրված իր աշխատության մեջ, որի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1909 թ.: Տե՛ս Charles Bally, *Traité de stylistique française*, Paris—Genève, 1951.

⁷ 2. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, ներածություն, Երևան, 1955, էջ 381*:

⁸ Գր. Ղափանցյան, *Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Երևան, 1939, էջ 347, 348*:

⁹ էդ. Ադայան, *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 291*:

¹⁰ Տե՛ս Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 71*:

և բազմաթիվ այլ թարգմանություն-նորակազմությունների, որոնցից և ոչ մեկը չի կարելի համարել համապատասխան ֆրանսերեն բառի պատճենումը: Ինչ վերաբերում է տառացի թարգմանությանը, ապա այն ենթադրում է մեկ լեզվի միավորների պարզ առադրումը մեկ այլ լեզվի միավորների հետ, նթե ընդունենք, թե պատճենումը «տառացի թարգմանություն» է, ապա ստիպված կլինենք ընդունել նաև, որ մեկ լեզվից մյուսը կատարվող թարգմանությունների ընթացքում կարող ենք ունենալ նույնքան պատճենում, որքան տառացիորեն թարգմանված շարույթ: Սակայն պատճենման էական հատկանիշներից մեկն այն է, որ նա երևան է գալիս որպես լեզվական նոր միավոր, մի բան, որ չի կարելի ասել տառացի թարգմանության մասին: Տառացի թարգմանություններ կարող են լինել որքան ասեք, իսկ պատճենումներ՝ սահմանափակ քանակությամբ: Մյուս կողմից, պատճենման դեպքում անհրաժեշտաբար ենթադրվում է օտար միավորի ոչ միայն իմաստի վերարտադրում, այլև ձևաբանական կառուցվածքի, կաղապարի կրկնօրինակում: Անկասկած հենց այս է նկատի ունեցել Մ. Աբեղյանը գրելով. «Հաճախ փոխանակ օտար բառեր ընդունելու՝ դրանց համապատասխան նշանակությունները տրվում են բնիկ բառին և կամ այլ լեզուների բառերի օրինակով նոր բառեր են կազմվում»¹¹:

Այսպիսով, պատճենումների թվին չեն կարող դասվել բառապաշարային բոլոր այն միավորները, որոնք ներկայացնում են օտար բառի թարգմանությունը, բայց չեն պատճենում, չեն կրկնօրինակում նրա ձևաբանական կառուցվածքը: Տվյալ շփանիշն անտեսելու դեպքում «պատճենում» հասկացությունը կորցնում է իր որոշակիությունը և պատճենումների ոլորտը շփազանց ընդարձակվում:

Բացի վերոհիշյալից, որևէ նորակազմ բառի կամ կայուն բառակապակցության պատճենում լինելը հաստատելու համար պետք է կարողանանք բավականաչափ վստահությամբ ասել, որ այն երևան է եկել համապատասխան օտար միավորի ազդեցությամբ: Հակառակ դեպքում պատճենումները կարող են շահմանազատվել օտար ազդեցությունից անկախ կերպով ստեղծված սեփական նորակազմություններից, որոնց կառուցվածքը երբեմն կարող է պատահականորեն համընկնել մեկ այլ լեզվի ինչ-որ կաղապարի հետ:

Վերոհիշյալ երեք հիմնական շփանիշների հաշվառումը (իմաստի վերարտադրում, կառուցվածքի կրկնօրինակում և համապատասխան օտար միավորի ազդեցությամբ ստեղծված լինելու որոշակիություն) իրավունք է տալիս այս կամ այն նորակազմությունը համարել պատճենում կամ ընդհակառակը, այն չդասել պատճենումների շարքը:

Ի մի բերելով վերևում ասվածը, տանք պատճենումների սահմանումը. Պատճենումները այն բառերն ու կայուն բառակապակցություններն են, որոնց օտար միավորի ազդեցությամբ ու ճիշտ կառուցվածքի օրինակով վերաբանում են վերջինիս իմաստը՝ մայրենի լեզվի համապատասխան միջոցներով:

Բառապաշարային այս կամ այն միավորի պատճենում լինելը հաստատող վերոհիշյալ երեք հիմնական շփանիշներից կարևորագույնն ու ամենա-

¹¹ Մ. Ա. Բ. - ան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 52: (Ընդգծումը մերն է. Ա. Բ.):

դժվար որոշելին նրա օտար ազդեցությունը երևան եկած լինելու ճշտումն է-
կույս հարցում հաշվի ենք առել հետևյալ հանգամանքները.

ա) նախ այն, որ տվյալ միավորը հանդիպում է թարգմանական գրակա-
նության մեջ, քանի որ ամենից ավելի այստեղ է զգալի օտար լեզվի ազդե-
ցությունը, նոր հասկացություններ արտահայտելու համար նրա միավորների
օրինակով համարժեք ձևեր ստեղծելու անհրաժեշտությունն ու անխուսափե-
լիությունը, իսկ «Թշվառներում» այդպիսի նոր հասկացությունները բավա-
կան մեծ թիվ են կազմում:

բ) Վեպի թարգմանչի՝ Գր. Զիլինկիրյանի, նշումներն, այս կամ այն միա-
վորի՝ թարգմանության ընթացքում ստեղծված լինելու մասին: Վեպի հայե-
րեն հրատարակության առաջաբանում նա գրում է. «Լեզվագետ ազգայինք
միայն կրնան երևակայել, թե թարգմանիչ մը որքան նեղություն և աշխատու-
թյուն կը կրե այսպիսի եվրոպական գիրք մը հայերենի թարգմանելու համար:
Ինչպես ըսինք արդեն, մասնավորապես «Թշվառներ»-ու մեջ կը վիտան այս
դժվարությունները, որոնց առաջինն է գտնել, կազմել, բարդել կամ հարմար-
ցնել այնպիսի բառեր, որոնք հայ մատենագրությանց և բառարաններու մեջ
չկան: Այս տեսակ բառերու առջև ստիպվեցանք ֆրանսերենն ալ դնել»:

Իրոք, Գր. Զիլինկիրյանը ավելի քան հինգ հարյուր միավորի կողքին փա-
կագծերում տվել է նաև ֆրանսերենը, դրանով իսկ շեշտելով վերջիններիս
նորակազմություններ լինելը: Նշենք սակայն, որ այդ հինգ հարյուրից մոտա-
վորապես հարյուրն են միայն վերարտադրում օտար միավորի կաղապարը և
կարող են պատճենումներ համարվել:

գ) Տվյալ միավորի առաջին գործածության թվականը ֆրանսերենում:
Խոսքը այն միավորների մասին է, որոնք հայ բառարանների տվյալներով մեր
լեզվում չեն եղել մինչև ֆրանսերենում երևան գալը և հետևապես հայերենում
մեծ մասամբ ստեղծվել են ֆրանսերենի հետևությունով, քանի որ անվիճելի է
մեր ժողովրդի արևմտյան հատվածի դրականության, մշակույթի, լեզվի ու
մտածելակերպի դեպի ֆրանսիականն ունեցած կողմնորոշումը: Այս հարցում
ֆրանսիական բառարանների տվյալները¹² համեմատել ենք հայ բառարան-
ների հետ, որը միաժամանակ հնարավոր է դարձրել ճշտել հայերենում այս
կամ այն միավորի ստեղծման մոտավոր ժամանակաշրջանը:

դ) Եթե բառը կամ բառակապակցությունն արտահայտում է ֆրանսիայի
ու նրա ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին ու կեն-
ցաղին բնորոշ հասկացություն, ապա նրա ֆրանսերենի ազդեցությամբ ստեղծ-
ված լինելը որևէ կասկած չի հարուցում:

ե) Վերջապես, որպես հիմնական աղբյուր օգտագործել ենք հայոց լեզվի
ու հայերենին առնչվող երկլեզվյան բառարանների տվյալները: Յուրաքան-
չուր բառամիավոր ստուգվել է մինչև թարգմանությունն ու նրանից հետո լույս
տեսած բոլոր կարևոր բառարաններով¹³, եթե տվյալ բառամիավորը գոյու-

¹² Oscar Bloch, Waither Von Wartburg, Dictionnaire étymologique de la langue française, Paris, 1968. Paul Robert, Dictionnaire de la langue fran-
çaise, Paris, 1970.

¹³ Մխիթար Աբրա Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. I, Վենե-
տիկ, 1749, հ. II, Վենետիկ, 1769 (հատուկ ուշադրություն ենք դարձրել II հատորի՝ Բառգիրք
ի գրաբարէ աշխարհաբարն և բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբառն բաժիններին): Ավետիս-
յան Գարրիել, Սյուրմելյան Խաչատուր, Ավգերյան Մկրտիչ, Նոր

թյուն շունի մինչթարգմտնական շրջանի բառարաններում և տեղ է գտել թարգմանությունից հետո լույս տեսածներում, ապա նրա նորակազմություն լինելն աներկբայելի է: Ֆրանսերենի հետևողությամբ կազմված լինելու հարցում շատ հատկանշական են ֆրանս-հայերեն բառարանների տվյալները, երբ օտար միավորի դիմաց ունենք նրա կառուցվածքն ու իմաստը վերարտադրող այնպիսի համարժեք, որը բառարանագրի կողմից նշվում է որպես նորակերտ բառամիավոր և որը չի եղել նախորդ բառարաններում: Բառարանների տեղյալները գալիս են ճշտելու նաև թարգմանչի նշումները: Հաճախ Զիլինկիյանին թվացել է, թե ինքը նոր բառ է կերտում, երբ իրականում այն արդեն գոյություն է ունեցել հայոց լեզվում:

Այսքանից հետո վրիպումներն, ինչ խոսք, անխուսափելի են, քանի որ պատճենումների հարցը բարդ է և հաճախ դժվար հաստատելի, իսկ բառարանների տվյալները՝ ոչ միշտ անթերի:

Մեր նպատակը չէ ապացուցել, թե այս կամ այն բառապաշարային միավորն անպայման ստեղծվել է թարգմանության ընթացքում և առաջին անգամ այստեղ է գործածվել: Նախ, նման նպատակադրումն անիրագործելի է, քանի որ չսխալվելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ վերջին դարերի գրականության համաբարբառ քարտարանը, որ գոյություն չունի, մյուս կողմից՝ այն կենդանի հարցի քննության շրջանակները և ստիպված կլինեինք սահմանափակվել թարգմանչի նշած պատճենումներով միայն: Մեր նպատակն է եղել հետևել ֆրանսերենի ազդեցությամբ ու թարգմանական գրականության ձևանպարհով հայերենի բառապաշարի հարստացման բնական ընթացքին, մի կրեուլթ, որ նկատելի էր XIX դ. կեսերից և ցայտուն՝ 60—70-ական թվականներին՝ գրական արևմտահայերենի որակական ձևավորման ու ինքնահաստատման պատմական այդ ժամանակաշրջանում: Ահա թե ինչու ուսումնասիրության նյութ ենք ընտրել Հյուգոյի «Թշվառներին» լեզուն, որի թարգմանության պատմությունը, ինչպես տեսանք, ընդգրկում է 1862—1870 թթ. միջև ընկած շրջանը և որն, անկասկած, բառապաշարի տեսակետից ամփոփում է ոչ միայն այդ տարիներին, այլև նախորդ տասնամյակներում ստեղծվածը:

Այժմ, համառոտակի, պատճենումների դասակարգման, նրանց տեսակների մասին.

Մասնագիտական գրականության մեջ որոշակի տարածում է ստացել և վերջին տասնամյակներում ինչ-որ չափով կարծես ավանդական է դարձել պատճենումների դասակարգումն ըստ հետևյալ հիմնական շերտերի, որոնք որոշ տարբերություններով արտահայտություն են գտել մի շարք հեղինակների աշխատություններում. ա) բառակազմական, բ) դարձվածաբանական և դ) իմաստային (Լ. Գալդի, Ռ. Բուդաղով, Կ. Ֆլեքենշտեյն, Լ. Պոնոմարենկո, Մ. Կոպիլենկո և ուրիշներ):

Բառգիրք Հայկազեան լեզվի, Վենետիկ, հ. I—II, 1836—1837, Զախչախյան Մանվել. Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837, Ավդեբյան Հարություն, Բառգիրք գաղղիերենի-հայ-ի տաճիկ, Վենետիկ, 1840, Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, II հրատ., Վենետիկ, 1865: Հյուրմուգյան էդուարդ, Բառգիրք յաշխարհաբարէ ի գրարար, Վենետիկ, 1869: Էմիլյան Սրապիոն, Նրեքլեզուեան բառգիրք՝ այսինքն գաղղիերեն-հայերեն-տաճիկերեն, II հրատ., Վիեննա, 1871: Բյուզանդացի Նորայր, Բառգիրք ի գաղղիերեն լեզուի ի հայերեն, Կ. Պոլիս, 1884: Նուպարյան Մեսրոպ, Բառարան ֆրանսերենի հայերեն աշխարհիկ, Կ. Պոլիս, 1892: Գաբամաճյան Յիմոն, Նոր բառգիրք հայերեն լեզուի, II հրատ., Կ. Պոլիս, 1907—1910:

Այս դասակարգման մեջ առարկելի են «դարձվածաբանական» և «իմաստային» պատճենումները: «Դարձվածաբանական պատճենում» ասելով հեղինակները որոշ դեպքերում հասկանում են տարբեր տիպի կայուն բառակապակցությունների պատճենումը: Սրանով իսկ ակնհայտ է դառնում, որ նրանք շատ լայն իմաստով են գործածում «դարձվածաբանական» տերմինը, քանի որ, ինչպես հայտնի է, ամեն կայուն բառակապակցություն դարձված չէ: Ընդհակառակը, ամեն դարձված կայուն բառակապակցություն է: Այլ խոսքով, կայուն բառակապակցությունն ավելի լայն ծավալի հասկացություն է և իր մեջ է առնում դարձված հասկացությունը¹⁴: Այս իմաստով ավելի ճիշտ կլինի առանձնացնել «կայուն բառակապակցությունների պատճենումներ» շերտը, որն իր մեջ կընդգրկի դարձվածների՝ որպես կայուն բառակապակցությունների տարատեսակի պատճենման դեպքերը:

Առավել ևս վիճելի է «իմաստային պատճենումների» հարցը: Որպես այդպիսիք ներկայացվում են այն նոր նշանակությունները, որ ձեռք են բերում տվյալ լեզվի բառերը որևէ այլ լեզվի միևնույն կամ մոտ նշանակություն ունեցող բառերի ազդեցությամբ:

Այսպիսի մոտեցումը տարակարծությունների տեղիք է տվել, Կարելի՞ է, արդյոք, այդ նոր նշանակությունները համարել «պատճենումներ» թե՛ ոչ: Այս հարցին ոմանք պատասխանում են դրականորեն (Ռ. Բուդաղով, Լ. Գալդի, Լ. Պոնոմարենկո և ուրիշներ)¹⁵, իսկ այլ լեզվաբաններ նման դեպքերն անվանում են «իմաստային փոխառություններ», «իմաստային ընդօրինակումներ», «իմաստային մերձեցումներ» (Վ. Վինոգրադով, Ս. Ումանն, է. Հաուգեն, Յու. Սորոկին)¹⁶:

Ելնելով վերևում ասվածից, առանձնացնում ենք պատճենումների երկու հիմնական շերտ. ա) բառապատճենումներ, բ) կայուն բառակապակցությունների պատճենումներ:

Ինչպես ցույց են տալիս անվանումները, առաջին դեպքում պատճենվում են առանձին բառեր, իսկ երկրորդ դեպքում՝ կայուն բառակապակցություններ, որոնք իրենց հերթին կարող են ենթարկվել ենթադասակարգման:

Վ. Հյուգոյի «Թշվառների» արևմտահայերեն թարգմանության մեջ բառապատճենումները թվական տեսակետից գերազանցում են կայուն բառակապակցությունների պատճենումներին: Ահա բառապատճենումների մի քանի օրինակ. հանրավորել (universaliser), համակիզում (conflagration), իրաւանման (vraisemblable), չակերտել (guillemeter), չարադէպ (malencontreux), ամբողջարար (complémentaire), ոստրանոց (huîtrière), վերահաստատություն (restauration), արտաբուրել (exhaler), ստորագծել (souligner), ալժտերեկ (chèvrefeuille), մաղլցիկ (grimpeur), դառնակ (tourniquet), դաշունել (poi-

14 Հմմտ. Ե. Գալդի, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 17:

15 Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1958, Л. Гальдин, Слова романского происхождения в русском языке, М., 1958, Л. А. Пonomorenko, Калькирование как вид влияния одного языка на другой (авт. канд. дисс.), Киев, 1965.

16 В. В. Виноградов, Очерки по истории русского литературного языка XVII—XIX вв., М., 1938. S. Ullmann, Précis de sémantique française, Berne, 1952. E. Haugen, The analysis of linguistic borrowing, „Language“, vol. 26, № 2, 1950, Ю. С. Сорокин, Развитие словарного состава русского литературного языка, 30—90 годы XIX века, М.—Л., 1965.

gnarder), լիտնարակ (arrière-cour), ստորերկիր (sous-sol), փայտփոր (pique-bois), միջնարարք (entr'acte), կապարել (plomber), կողիկ (côtelette) և այլն:

Կայուն բառակապակցությունների պատճենումները համեմատաբար քիչ լինելով հանդերձ, որոշակի թիվ են կազմում: Օրինակ՝ առժամանակեայ կառավարություն (gouvernement provisoire), ձրի և հարկադրական կրթութիւն (instruction gratuite et obligatoire), ընդհանուր քուէարկութիւն (suffrage universel), հնարումի արտօնագիր (brevet d'invention), մեղմարար պարագաներ (circonstances atténuantes), էլեկտրական հեռագիր (télégraphe électrique), պատուոյ լեգիոն (Légion d'honneur), բազմարուեստեան դպրոց (école polytechnique), շարադաս պատերազմ (bataille rangée), աթոռակից խորհրդական (conseiller assesseur), չոր սրտին չոր աչք (à cœur sec, œil sec), գթութեան քույր (sœur de charité) և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ բառակապակցությունների պատճենման դեպքում առանձին բառերի բաղադրիչների կրկնօրինակումը հետին պլան է մղվում, քանի որ այս դեպքում պատճենվում է ոչ թե բառը, այլ բառակապակցությունը, իսկ բառակապակցության բաղադրիչները առանձին բառեր են, որոնք և կազմում են վերջինիս կառուցվածքը, ստեղծում նրա կաղապարը:

Բնօրինակի կաղապարը վերարտադրելու տեսակետից պատճենումները կարող են լինել ճշգրիտ և ոչ ճշգրիտ: Ոչ ճշգրիտ պատճենումների դեպքում տեղի է ունենում որոշ շեղում օտար միավորի կաղապարից, որ հիմնականում արտահայտվում է բաղադրիչների տեղափոխության մեջ: Շեղումները բացատրվում են պատճենմանը մասնակցող երկու լեզուներից յուրաքանչյուրի շարահյուսական առանձնահատկություններով և բառակազմական ու իմաստային համակարգերի ինքնատիպությամբ: Այսպես, Ֆրանսերենի բայական հիմքով բարդություններին, որտեղ բայական մասը հանդես է գալիս որպես առաջին տարր, հայերենում համապատասխանում է տեղափոխված բաղադրիչներով պատճենում: Օրինակ՝ փայտփոր (pique-bois), պարանակիր (porte-haubans), կաղամբահատ (coupe-choux) և այլն: Նույն ձևով էլ Ֆրանսերենի դոյական + ածական կաղապարին հայերենում, որպես ընդհանուր կանոն, համապատասխանում է շրջված՝ ածական + գոյական կառուցվածքը՝ պայմանավորված Ֆրանսերենում և հայերենում որոշյի ու որոշյալի շարադասության տարբերությամբ:

Օրինակների վերլուծության ժամանակ ուշադրություն է գրավում Ֆրանսերենի կայուն բառակապակցությունների պատճենումը: Հաճախ սրանց դիմաց հայերենում առնենք ոչ թե բառակապակցություն, այլ բարդ բառ: Եթե Ֆրանսերենը հակված է դեպի վերլուծական կառուցվածքները, որն արտահայտություն է գտնում ոչ միայն նրա քերականության, այլև բառապաշարի մեջ¹⁷, ապա նույնը չենք կարող ասել հայերենի մասին: Լինելով բառածանցման ու բառաբարդման գործուն միջոցներով հարուստ ու ճկուն լեզու, հայերենը հաճախ Ֆրանսերենի բառակապակցությունը պատճենում է մեկ բառով: Օրինակ՝ նշանակէտ (point de mire), քաղաքատուն (hôtel de ville), հատակէտ (point d'intersection), անցախօս (mot de passe), բեռնարկղ (caisse

¹⁷ Հմմտ. Յ. Н. Левит, К проблеме аналитического слова в современном французском языке, Минск, 1968.

d'emballage), *ողնասիւն* (colonne vertébrale), *բառախաղ* (jeu de mots), *ամակատուի* (boîte aux lettres) և այլն,

Հյուգոյի «Թշվառների» արևմտահայերեն թարգմանության մեջ պատճենումների ընդհանուր թիվը հասնում է մոտ 250-ի: Սրանցից, անշուշտ, ոչ բոլորն են այսօր գործածական: Ահա թե ինչու պատճենումների ուսումնասիրության խնդրի երկրորդ կարևորագույն կողմը նրանց յուրացման, այսինքն լեզվում ամրանալու կամ շարժանալու հարցն է: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հյուգոյի վեպի արևմտահայերեն և արևելահայերեն թարգմանությունների համեմատությունը, ինչպես նաև պատճենումների գործածությունը հայ գրական լեզվի երկու տարբերակներում այսօրվա մակարդակով:

Համեմատությունները ցույց են տալիս, որ Գր. Չիլինկիրյանի թարգմանության մեջ տեղ գտած պատճենումների որոշ մասը (մոտ 40-ը) նույնությամբ պահպանվել է Վահե Միքայելյանի արևելահայերեն թարգմանության մեջ¹⁸, իսկ ավելի քան 70 միավոր՝ փոքր տարբերություններով: Միաժամանակ, հայոց լեզվի բառարանների¹⁹ տվյալների համաձայն պատճենումների ընդհանուր թվի 40 %-ն ընդունելի է արդի գրական հայերենի զույգ ճյուղերի համար:

ФРАНЦУЗСКИЕ ЛЕКСИЧЕСКИЕ КАЛЬКИ СЛОВ И СЛОВСОЧЕТАНИИ.

(на материале западно-армянского перевода романа В. Гюго «Отверженные»).

А. К. БАРЛЕЗИЯН

Резюме

В XIX веке наблюдается влияние французского языка на западно-армянский литературный язык. В армянских переводах произведений французских писателей, в частности, у В. Гюго, было скалькировано большое количество слов и устойчивых словосочетаний. Количество калек в западноармяноком переводе романа В. Гюго «Отверженные» (переводчик Григор Чилинкирян) составляет около 250 единиц.

Кальки — это слова и устойчивые словосочетания, которые, опираясь на структуру иноязычного прототипа и под его непосредственным влиянием, воспроизводят значение соответствующими средствами родного языка. Мы не включаем в состав калек так называемые «семантические кальки».

Основными критериями калькирования мы считаем воспроизведение структуры иноязычной модели и достаточную уверенность в том, что данная единица появилась под влиянием соответствующего иноязычного прототипа.

¹⁸ Վիկտոր Հյուգո, Թշվառներ, հ. 1—5, Երևան, 1940, 1946—51:

¹⁹ Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—45 թթ., «Փամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. I, Երևան, 1969. Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967: